Արձանագրություն 11

ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԵՄԾՁԲ-24/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի նախաորակավորման ընթացակարգի հայտերի գնահատման նիստի

ք. Երևան

17 հունիսի 2024թ.
Ժամը՝ 09:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Ա. Ավանեսյան – ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ,

Անդամներ

Ա. Մուրադյան - ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ,
Ք. Ղալեչյան - ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ,
Ա. Քոչարյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ,
Ա. Ջումայան - ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ,
Դ. Գրիգորյան - ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ,
Ս. Գրիգորյան - Երևանի քաղաքապետի տեղակալ,
Ն. Երիցյան - «Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամի տնօրեն,
Ս. Շահնազարյան - ՀՀ ֆինանսների նախարարության գնումների քաղաքականության վարչության պետ,
Լ. Ավետիսյան - «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի տնօրեն,

Գնումները համակարգող

Ա. Աղաբաբյան – ՀՀ ֆինանսների նախարարության կառավարչական հարցերի կազմակերպման վարչության գնումների բաժնի պետ,

Բացակայում էին՝

Հանձնաժողովի անդամներ

Գ. Մանթաշյան – ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ,
Կ. Բրուտյան - ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ:

1. **<u>Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին</u>**

Հանձնաժողովն ընդունեց ի գիտություն, որ՝

1. EUROPEAN DYNAMICS SA և VXSOFT LLC-ի, EEEBID KFT AN EBIDTOPAY GROUP COMPANY և SYNERGY INTERNATIONAL SYSTEMS, INC.-ի, Amazon Web Services-ի և Oracle-ի կողմից ներկայացված փաստաթղթերը ներկայացված են սահմանված պահանջներին համապատասխան:

2. «Լոֆտ» ՍՊԸ-ի, Nextenders (India) Private Limited-ի, Dohatec New Media-ի և StelthLabs LLC-ի կողմից ներկայացված հայտերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

• «Լսոֆտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա չէ նախաորակավորման հայտարարության 16-րդ կետի 5-րդ ենթակետով պահանջվող ISO 9001 հավաստագրի առկայությունը բավարար կերպով հիմնավորող փաստաթուղթը, ինչպես նաև վերջինիս կողմից ներկայացված պայմանագիրը չի բավարարում նախաորակավորման հայտարարության 4.1 կետով սահմանված համանմանության չափորոշիչին:

• Nextenders (India) Private Limited-ի կողմից ներկայացված հայտում առկա չէ նախաորակավորման հայտարարության 16-րդ կետի 5-րդ ենթակետով պահանջվող ISO/IEC 27001 հավաստագրի առկայությունը բավարար կերպով հիմնավորող փաստաթուղթը, իսկ ISO 9001 հավաստագրի վավերականության ժամկետն ավարտված է: Ինչպես նաև վերջինիս կողմից չի ներկայացվել նախաորակավորման հայտարարության 16-րդ կետի 3-րդ ենթակետով պահանջվող՝ գործող համակարգի(երի) նախագծումը, մշակումը և ներդրումը հավաստող փաստաթղթերի բնօրինակների պատճենները, այն է՝ պայմանագրեր (այդ թվում բաժանորդագրումներ) և հավաստումը համակարգի պատվիրատուի/օգտատերերի կողմից:

• Dohatec New Media-ն և StelthLabs LLC-ն չեն ներկայացրել նախաորակավորման հայտարարության 16-րդ կետով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 10, դեմ – 0

2. Հանձնաժողովի կայացրած որոշումները

Հանձնաժողովը որոշեց.

1. EUROPEAN DYNAMICS SA և VXSOFT LLC-ի, EEEBID KFT AN EBIDTOPAY GROUP COMPANY և SYNERGY INTERNATIONAL SYSTEMS, INC.-ի, Amazon Web Services-ի և Oracle-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

2. Կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը 1 աշխատանքային օրով և ծանուցել՝

• «Լսոֆտ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով 1 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել նախաորակավորման հայտարարության 16-րդ կետի 5-րդ ենթակետով պահանջվող ISO 9001 հավաստագրի առկայությունը բավարար կերպով հիմնավորող փաստաթուղթը, ինչպես նաև նախաորակավորման հայտարարության 4.1 կետով սահմանված համանմանության չափորոշիչին բավարարող՝ գործող համակարգի(երի) նախագծումը, մշակումը և ներդրումը հավաստող փաստաթղթերի բնօրինակների պատճենները, այն է՝ պայմանագրեր (այդ թվում բաժանորդագրումներ) և հավաստումը համակարգի պատվիրատուի/օգտատերերի կողմից,

• Nextenders (India) Private Limited-ին՝ առաջարկելով 1 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել նախաորակավորման հայտարարության 16-րդ կետի 5-րդ ենթակետով պահանջվող ISO 9001 և ISO/IEC 27001 հավաստագրերի առկայությունը բավարար կերպով

հիմնավորող փաստաթուղթը, ինչպես նաև նախաորակավորման հայտարարության 16-րդ կետի 3-րդ ենթակետով պահանջվող՝ գործող համակարգի(երի) նախագծումը, մշակումը և ներդրումը հավաստող փաստաթղթերի բնօրինակների պատճենները, այն է՝ պայմանագրեր (այդ թվում բաժանորդագրումներ) և հավաստումը համակարգի պատվիրատուի/օգտատերերի կողմից,

- Dohatec New Media-ին՝ առաջարկելով 1 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել նախաորակավորման հայտարարության 16-րդ կետով պահանջվող փաստաթղթերը,
- SteltheLabs LLC-ին՝ առաջարկելով 1 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել նախաորակավորման հայտարարության 16-րդ կետով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 10, դեմ – 0:

3. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և ժամը</u>

«ՀՀ ՖՆ-ԵՄԾՁԲ-24/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել սույն թվականի հունիսի 19-ին ժամը 17:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 10, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝	AVANESYAN AVAG 2003930574 Digitally signed by AVANESYAN AVAG 2003930574 Date: 2024.06.18 09:49:10 +04'00'	Ա. Ավանեսյան
Հանձնաժողովի անդամներ՝	Digitally signed by MURADYAN ASHOT 1204800 Date: 2024-06-18 15:47:28	Ա. Մուրադյան
	Signed by: GHALECHYAN KRISTINE 55047700 Date: Tue, 18 Jun 2024 18:09:26 GMT+04:00	Ք. Ղալեչյան
	KOCHARYAN ALFRED 3002890618 Подписано цифровой подписью: KOCHARYAN ALFRED 3002890618 DN: c=AM, sn=••••••••, givenName=••••••, serialNumber=64f4f216f020, cn=KOCHARYAN ALFRED 3002890618 Дата: 2024.06.19 11:40:24 +04'00'	Ա. Քոչարյան
	DZHUMAYAN ARTAK 2801841080 Подписано: DZHUMAYAN ARTAK 2801841080 DN: cn=DZHUMAYAN ARTAK 2801841080, c=AM Дата: 2024.06.18 12:54:11 +04'00'	Ա. Ջումայան
	Signed by: GRIGORYAN DAVIT 2102800415 Date: 2024-06-18 10:58:21	Դ. Գրիգորյան
	GRIGORYAN SUREN 3414921200 Digitally signed by GRIGORYAN SUREN 3414921200 Date: 2024.06.18 15:16:56 +04'00'	Ս. Գրիգորյան
		Ն. Երիցյան
	SHAHNAZARYAN SERGEY 1202770106 Digitally signed by SHAHNAZARYAN SERGEY 1202770106 Date: 2024.06.18 09:43:38 +04'00'	Ս. Շահնազարյան

Լ. Ավետիսյան

Գնումները համակարգող՝ Ա. Աղաբաբյան